

Թաղաւոր մը որոյ իշխանութիւնը բացարձակ է, եթէ խնաստուն եւ բարերար է, կրնայ ժամանակ մը արագ արագ աւելցնել ժողովրդեան բարգաւաճումը, իր բացարձակ իշխանութեամբը կրնայ բարձր քաղաքակրթութեան ձեւ եւ կերպարանք տալանոնց, բայց այսպէս ընելով չի զարգացներ այն բնական յատկութիւնները որ բացարձակապէս Հայրաւոր են ազգի մը բարձր աստիճանաւ ծաղկելուն եւ բարգաւաճելուն: Ինչպէս անհատը, նոյնպէս ազգը կարօտ են ազատ եւ պատասխանատու ըլլալու որպէս զի յառաջ երթան: Բայց աղքը բաղկացնողք անհատներ են, ուստի եթէ անհատը ազատ ըլլալի իրենց ձեռնարկութիւններուն մէջ իր սորվին գործունեայ, ժուժկա եւ առաքինի ըլլալ, ազգը կ'ըլլայ նշանաւոր առաքինութեամբ եւ յաջողութեամբ :

Իրաւ է որ մենք չենք ուզեր մեր գա-
ւառաբնակ եղբայրները, մանաւանդ ե-
րիտասարդներն ու պառօանիները, խրա-

Կ. ԿՍՄԻՍ, մարտ 3, 1879

տեսութեան ջիւղը կտրած կամ հիւանդա-

Փետ. 27 րոտ Յուէն, և մարտ 11 քոտ Կոտ., 1879

ՊՈՒԼԿԱՐԻ Ս.

Պուլկարիոյ սահմանադրութեան ծրագիրը պատրաստուած եւ Պուլկարաց ազգային ժողովոյ մատուցուած է : Միապահանգ Գործոց մէջ Պուլկար ժողովրդեան առաջնորդելու եւ հնարաւոր դժուարութեանց առաջին անհիշու համար՝ ծրագրէրը շատ մանրամասն եւ շատ ընդարձակ գրուած է : Նոյն իսկ ծրագրին ընդարձակութիւնն անհնար կ'ընէ այժմէն դիտողութէ վերջապէս Պուլկարիոյ սահմանադրութիւնն ինչ ձեւ պիտի առնէ : Ազգային ժողովոյ մէջ երկար քննութեան պիտի առնուի եւ թերեւս ամբողջութեամբ ընդունուելէ առաջ մեծագէտ պիտի փոխուի : Սակայն հաւանական է թէ գլխաւոր կէտերն անփոփոխ պիտի մնան : Սահմանադրութիւնը կը տարամադրէ թէ Պուլկարիա պիտի կառավարուի պաշտօնէից ժողովէ մը որ պիտի գործէ իբր խորհրդական իշխանին , եւ հաւանութեամբ ազգային ժողովոյ : Ազգային ժողովը պիտի բաղկանայ էկզարքէն , ամբողջ Պուլկար եպիսկոպոսաց կէսէն , դատաւորաց կէսէն , ժողովրդեան կողմէն ընտրուած երեսփոխաններէ , որ պիտի ըլլան իւրաքանչիւր 20,000 հոգւոյ համար չորս անձինք , եւ իշխանին կողմէն կարգուած երեսփոխաններէն որ պիտի ըլլան ժողովրդեան կողմէն ընտրուած երեսփոխաններուն կիսոյն չափ :

Սահմանադրութեան այն արամադրու-
թիւնն որ ազգային ժողովոյ մէջ աթու-
ներ կու տայ Պուլկար եպիսկոպոսոց՝ հա-
մաճայն չէ քաղաքական հաւասարու-
թեան, որ, ըստ դաշնադրութեան Պերլի-
նի, ապահովուած է ամեն կրօնքի եւ դա-
ւանութեան, վանեղի վերջոյնեալ արամա-
դրութիւնը նախապատուութիւն կու տայ
Պուլկարական եկեղեցւոյ :

Պուլիարիոյ ազգային ժողովոյ մէջ արդէն երկու կուսակցութիւններ կան: Այս երկու կուսակցութիւններէն մին կ'ուզէ մերժել Պերլինի դաշնադրութիւնը: Միւս կուսակցութիւնը միտեալ է ընդունել յիշեալ դաշնադրութիւնն, եւ որչափ հնար է օգտուտ քաղել անկէ: Բուսիա այլ եւ այլ պատեհութեամբ յայտարարած է թէ պիտի դործադրէ Պերլինի դաշնադրութիւնը, բայց, ընդհակառակն, Բուսական պաշտօնակալաց ընթացքն այնպէս է որ կը քաջաւերէ Պուլիարները դէմ դնել Պերլինի դաշնադրութեան, եւ տարակոյտ կը ձգէ Բուսիոյ բուն նպատակին վրայ, նաեւ զժուար է հասկնալ թէ Բուսիա ինչ նպատակաւ մտերս խնդրած է Եւրոպական տէրութիւններէն նկատողութեան առնել Պալգանի կրճերուն նկատմամբ Պուլիարաց պաշանջումը: Պուլիարիոյ եւ Արեւելեան Բուսիլի նկատմամբ Պերլինի դաշնադրութեան տրամադրութիւնները յայտնի են, եւ կ'երեւի թէ Եւրոպա զանոնք դործադրել որոշած է, բայց այս մասին Բուսիոյ ընթացքը կը նմանի այն մարդուն ընթացքին որ կը վարձուի մեզքն մէջ լինալ: Մարդը մեզքն քովերը կը թափառի, կ'ուզէ մեզքն հաճոյքը վայելել, բայց կը հրաժարի անկէ պատիփէ վախճալով: Շատ աղիւս մարդը մեզքէ երես դարձնելով կ'որոշէ առաքելնի կեանք վարել, բայց յորձնութիւնը նորէն կու գայ, եւ մարդը դարձեալ կը սկսի միառու ցուցնել մեզքն տեղի տալու եւ պատժոյ երկիւղը առ ուշինչ համարելու: Ոչ ոք կրնայ ըսել թէ վերջապէս Բուսիա ինչ պիտի ընէ, բայց օր ըստ օրէ աւելի յայտնի կ'ըլլայ թէ Պուլիարիոյ, Արեւելեան Բուսիլի եւ նոյն լակ Եւրոպայի խաղաղութիւնը դեռ անտարակուսելի կերպով ապահովուած չէ:

Այս տարակուսելի վիճակը մեծ ազդե-
ցութիւն ունի Արեւելեան Ռումէլիի վրայ:
Յիշեալ պատերէն սնտիկիսկերոց պատարաստ

են եւրոպական յանձնաժողովը դէմ դնելու, եթէ զոյգն քաջալերուելուն մը տրուի անոնց: Ենչի Զաղրայի եւ Չըրբանի մէջ յանձնաժողովը եւեմոտական պաշտօնակալաց ընդդիմութիւն ընողները թէեւ պատժուեցան, բայց եւ այնպէս նմանօրինակ դէպքեր տեղի ունեցան Գարլովայի մէջ: Հիմա կը դուռըցուի թէ Տոնաուզոֆ իշխանն Արեւելեան Րումէլիի Րուսական բանակին ընդհանուր հրամանատար պիտի կարգուի: Եթէ այս զրոյցն ստոյգ ըլլայ, Արեւելեան Րումէլիի բնակիչները պիտի քաջալերէ բռնական միջոցներու ձեռնարկելու:

ՐՈՒՍԻՈՅ ԲՈՂՈՔԸ ԹՈՒՎԱԼԻ ԾՐԱԳՐԻՆ ԴԵՄ

Րուսիոյ դեսպանը Բ. դրան ծանուցա-
գիր մը ղրկելով Մ. Տը Թուրքիլի հետ կըն-
քուած պայմանագրութեան Րուսիոյ հետ
կնքուած վերջնական դաշնագրին հսկա-
ւակ ըլլալը ծանուցած է: Րուսիոյ դես-
պանն ըսած է թէ Րուսիոյ կառավարու-
թիւնն որ թուականի կարգաւ Թուրքիոյ
պարտաւտեարց կարգն անցաւ, առաջնու-
թեան իրաւունք ունի Թուրքիոյ այն ամէն
հաստից վրայ որ Պերլինի դաշնագրու-
թեան կնքուած տոտէն դեռ զբաւի գրուած
չէին: Իսկ Բ. դուռն նոր փոխառութեան
մը կարգադրութիւնն ապահովելու համար
այնպիսի հասցիքներ կ'առաջարկէ Մ. Տը
Թուրքիլի, որ դեռ զբաւի գրուած չեն եւ
ամենք ալ այս ժամուս դեռ գոյութիւն
չունին: Այլպիսի կարգադրութիւն մը պա-
տերազմական տուգանաց հասուցման մա-
սին Րուսիոյ արուած ապահովութիւնն առ
ոչինչ կը հանէ: Նաեւ Րուսիա չկրնար
անասորքեր աջօք տեսնել յանձնաժողով
մը կազմութիւնն, որ իրաւունք պիտի ու-
նենայ ոչ միայն յանձնեալ տուրքերը հա-
ւաքելու եւ դործածելու, այլ եւ իւր հսկո-
ղութեան ներքեւ առնելու եւ ստուգելու
Թուրքիոյ ընդհանուր հասցիքները, եւ
այդ յանձնաժողովը մէջ բաց Օսմանեա-
նականներէն Գազիլայի եւ Անգլիայի ան-
դամներ միայն պիտի գտնուին: Ելեւմ-
տական յանձնաժողով մը կազմելու հա-
մար Րուսիոյ կարծիքը սա է թէ բոլոր
չափերը հաշտեցնելու միակ միջոցը միջադ-
գային ելեւմտական յանձնաժողով մը հաս-
տատելն է, ինչպէս որ նախատեսուած
Պերլինի տէրութեանց ժողովը ութեւ
տասներորդ ատենագրութեան մէջ:

Բ. դուռը Բուսիոյ յիշեալ ծանուցադրոյ պատասխանելով բաժնէ թէ անթուղեան ժողովոյ մէջ որոշուած է որ Բուսիա Թուրքիոյ Հին պարտատեարց իրաւունքն յարգէ , բայց Բուսիոյ պահանջքին առաջնութեան մատին բան մը ըսուած չէ , թէ Բ. դուռն իրաւունք ունի զբաւի չգրուած հասցեներն ըստ հաճոյս գործածելու թէ Գաղիացի , Անգլիացի եւ Օսմանեան իշխաններէ բաղկացեալ յանձնաժողով մը կազմութիւնը որեւիցէ քաղաքական կերպարանք մը չունի , եւ թէ Բ. դուռն իր պարտատեարց մէջտեղ համաձայնութիւն գոյացած ըլլալով բոլոր տէրութեանց գործակալատարներէն բաղկացեալ յանձնաժողովոյ մը կազմութեան այլեւս հարկ չկայ :

Ոչ միայն Բուսիա, այլև Իտալիա ընդամենը զբաղած է թուրքիլի ելեւմտական ծրագրով։ Դէմ նաեւ ուրիշ դժուարութիւններ ելան նոր լիւսառութեան կնքուելուն նկատմամբ, եւ որովհետեւ Բ. դրան կողմ թուրքիլի տրուած պայմանաժամը լրացած է, չառ պատճառ չկայ յուսալու թէ ուրիշ լիւսառութիւնը սխալ յաջողի։ Սակայն ուրիշ դրամատեսարար պատրաստ են դրամական օգնութիւն ընել թուրքիյ ելեւմտութիւնից չափերուն յատկացուած հոսիքներուն մատակարարութիւնը բոլորովն յանձնուի Օսմանցի եւ Եւրոպացի աշխատակերէ կազմուած յանձնաժողովի։

ՆԵՐՅԻՆ ԼՈՐԵՐ

Վիկնոյի նախորդ դեսպան Էսատ պէյ
արտաքին գործոց պաշտօնէին խորհրդա-
կան անուանեցաւ :

— Անցեալ երեքշաբթի օր Սուլթան Պայազլիտի հրապարակը դարձեալ գումար մը թղթադրամ այրուեցաւ :

— Պէտրոնան փառայի որդիներէն Օսման
եւ Հիւսէյին պէյերը, նաեւ Պահրի պէյ,
որ իզգէթ փառայի ընկերացած էր, անց-
եալ չորեքշաբթի օր հոս հասան, եւ Օսման
եւ Հիւսէյին պէյերն ոտտիկանութեան
դռռն հիւրընկալուեցան, իսկ Պահրի պէյ
սուղպակի կայսերական պալատը գնաց :

—Սթամբուլը քաղաքը կ'ըսէ թէ Ղալիլոյ փաշա որ փաքուն Ասիոյ քննիչ անուանուած էր, հրաժարած է իր պաշտօնէն :

— Կ'ըստի թէ Բ. դուռն Եւրոպական տէրութեանց ծանուցադիր մը զրկելով Յունաստանի սահմանադրւոյ ուղղութեան խնդրոյն տնւոյժ մնալուն պատճառը հետեւեալ կերպով բացատրած է : Յունաստանն կը պնդէ որ սահմանադրւածն Պերլինի տէրութեանց ժողովոյ ատենադրութեան մէջ նշանակուած գէօն համեմատ ուղղուի, եւ չուզեր յարգել զինուորական եւ քաղաքական այն շահերը զորս պահպանել պարտաւոր է Բ. դուռը : Ուստի երկու կողման մէջտեղ համաձայնութիւն մը գոյանալը հնարաւոր չերեւիր :

ՍՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աֆղանխտանն էմիր, Շիր Ալի խանն
մահն այնպիսի բարեպատեհ գեպք մ'է
Անգղիացւոց համար որ Բուսք թերեւս
կարճեն թէ Անգղիացիք ոսկւով գնած են
Շիր Ալիի մահը, Սակայն այսպիսի ենե
թաղորդութիւն մ'ընելու հարկ չկայ, եւ
էմիրին մահուանէն Անգղիացւոց քաղելու
օգուտը տարակուսելի է։ Նոր էմիրը,
Նազուս խան, խաղաղութեան փառաքան
ըլլալու սրեւիցէ նոյն չքուցեցոր Բայց եւ
այնպէս չունի լաւ կազմուած բանակ մը
Սակայն քանզի ընդգիւժութիւն ընելու հա-
մար Անգղիացիք չկան կը հանգիպին այն
գիտարութեանց որ նախառեւտած էին
պատերազմը ուկեւէն առաջ, Անգղիացիք
Աֆղանխտանն մէջ աւելի գործ կատարե-
ցին քան զոր կ'ուզէին ։ Յիշեալ երկիրն
ամէն կողմէն բաց է Անգղիացւոց առջեւ
բայց Անգղիացիք աւելի յառաջ քալել ե-
նորանոր ծախք ընելէ կը քաշուին Ուստի
նոր շարժում մ'ըրած են գէպ ի խաղա-
ղութիւն հաշտուի խառնաբախդութիւն
ընելով Աֆղանացի Անգղիացիք խաղաղու-
թիւն առաջարկած են Նազուս խանի
ընելով թէ իրենց պատերազմը Շիր Ալի
գէտ էր, եւ որովհետեւ չկան Շիր Ալի
մեռած է, այլեւս հարկ չկայ պատերազմի
յառաջ տանելու ։

Աֆղանիստանին առնուած վերջին լուս-
րերուն նայելով Էսգուդ խան արխան
առչտ կռիւ մ'ըրած է այլեւսյլ ցեղերու
գլխաւորներուն հետ, եւ յաղթող ելած է
կառէն: Անգղիայիցիք յագուսլ խանի յա-
ջողութիւնը խաղաղութեան նպատակով
կը համարին:

— Գաղտնի մէջ քաղաքական կուսակցութիւնները դեռ համաձայնած չեն, Հանրապետական կուսակցութեան այլեւայլ ճիւղերը շատ յազուաճե են ՏԸ Գրական պաշտօնիւթեան դատաւարներն ենթադրու խնդրոյն վրայ, եւ ոմանք կըտըըը դատեն պաշտօնեաներնընելով թէ զուրկ իր շարժին: Այս մասին հանրապետական նոց յազուաճ յայտնի եղաւ ազդային Ժողովք մէջ ներքին գործոց պաշտօնեայ Ս. Մարտիրոսի դէմ ուղղուած յարձակմամբ: Ս. Մարտիրոսի դէմ յարձակում եղաւ փողոցայիններու մէջ Լրագիր վաճառներու նկատմամբ ոստիկանութեան կողմէն ձեռք առնուած միջոցի մը պատճառաւ որ մամուլը աղաւտութեան դէմ կը համարուէր: Ազգային Ժողովոյ քննադատութեան վրայ Ս. Մարտիրոսը պատժուէ հրաժարեցաւ, եւ անոր յաջորդեց առեւտրական գործոց պաշտօնեայն: Մաք Մահոն մարաշխախտի անկմատուն հանրապետականաց ցուցուցած չափաւորութիւնը շատ աղէկ առդեցութիւնըմէ էր, բոցոց այս վերջին յազուաճ կրնայ ազդեցութիւնը տկարացնել:

Առնուած վերջին լուրերուն հայել
Գաղիոյ ազգային ժողովոյ մէկ յան
հաժողովր Պրակլիի պաշտօնէութեան դ

ռուսաստանի կանչուեղուն ի նպաստ տեղեկագիր տուած է, բայց պաշտօնեայք կ'ընդգլխանան ասոր : Կը կարծուի թէ ազգային ժողովը յանձնառուովոյ առաջարկութիւնը պիտի մերժէ, սակայն եթէ ընդունի յիշեալ առաջարկութիւնը, պաշտօնեայք պիտի ստիպուին հրաժարիլ

— Աւստրիոյ եւ Հունգարիոյ արգելոցին ժողովոց յանձնաժողովները Հիմա ի Բէշչա գումարուած են եւ յայտնի հակախուս-թիւն ցուցնելով պաշտօնից մեծ հոգ կը պաշտանաւեն : 1878 ին Պոսնիոյ զբաւման ծախսը բացը զոցելու համար կառավա-րութեան պահանջած գումարին միայն մէկ ութերորդին հաւանութիւն տուած են : Թէեւ Պոսնիոյ բանակին 1879 ի ծա-խսը համար պահանջուած գումարին հա-ւանութիւն տուած են, բայց միւս կողմէն պաշտօնեաներէն պահանջած են Պոսնիոյ բանակը նուազեցնել եւ խաղաղութեան վիճակի մէջ դնել :

— Պիզմարք իշխանը կարող եղած չէ իր ուզածին պէս կառավարելու Գերմանիոյ ազգային ժողովը, երկու շարաւթ առաջ ժողիք թէ Պիզմարք եւս ճանաչող ազգային բաժանիչն հառանդութիւն ճանեղ պատժելու երկու ընկերավար երեսփոխաններ, բայց ազգային ժողովը մերժեց Պիզմարքին առաջարկութիւնը : Հիմա ազգային ժողովի չենք ինչին կանոնադրութեան համար Պիզմարք իշխանին մատուցած ծրագիրն ալ մերժած է, վրանգի ծրագիրն ընկերավարաց դէմ խիստ միջոցներ ձեռք առնելու համար կառավարութեան իշխանութիւն տալով անհատական տպատուութեան կը դադէր :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Բ. Դուռը տեղաթեւան զանաճուն տն-
միջական պէտքերը հոգալու համար Դա-
ւաթիոյ սեղանաւորներուն հետ բանակ-
ցութեան մտած է վիստառութիւն մը
կնքելու :

— Եկաի գուլէկն Զօրլու շարաթ օր 18
 խաչոր թնդանօթ եւ կիրակի օր 60 թըն-
 դանօթ դրկուած են:

— Բէռօք, իստաւ Աղբրանուարդոյ կա-
ռաւարտութիւնն իր ձեռքն առած ընտել-
երէկ երկու խումբ նորակազմ ոստիկաննե-
րակէ պիտի մեկնէին Աղբրանուարդիս եր-
թալու :

—Կ'ըստի թէ Բաաիոյ դեսպանը փոխառութեան խնդրոյն վրայ նոր ծանուցագիր մը զրկած է Բ. դուռը: Դեսպանը Բ. դրան պատասխանադրոյն մէջ ցոյց տած փաստերը Հերքել ջանալով, ըստ գաշնադրութեան Պիերլին Եւրոպական բոլոր տէրութեանց ներկայացուցիչներէ, բաղկացեալ երեսմասեան յանձնաժողովը մը կազմութիւնը պահանջած է:

— Ուզում քչօրրիւէն եւ Տիմէդոքայէ՝
առնուած լուրերուն նայելով Պաւլկար,
յիշեալ տեղերէն դադթեւ սկսած են:

— Թաղիվ լրագիրն մարտ 9 թուականու
հաւ կը ծանուցանէ թէ Արեւմտեան տէ-
րութիւնք (Անգլիա եւ Գաղիա) Բ. Ղրա-
խմայեցած են սր Պալլականերուն Օսմանեան
եան դօրաց կողմանէ դառուելուն վրայ
եւ, եթէ Հարկ ըլլայ, Օսմանեան զօրա-
ւորակէան Բուսնի մօտեւուն վրայ պիտ
պիտէն :

— Լարիա Մելիքոյի զորապետին կողմէ
զրկուած զրուիեան մը նայելով ժառանգ
ախօրը զրեթէ անհետ եղած է այն ան
զերմէն ուր երբեմն ճարակած էր :

— Մարտ 9 թուսկանուս Գահիրէէ
քաղաւաճ հեռագիր մը կը ծանուցանէ թ
Գաղիա եւ Անգղիա եղբայրտոսի դաւաժու
ռանը Մէհմէտ Թէվֆիկ փաշային առա
ջին պաշտօնէութիւնին ընդունեճ են Նո
սրաբ փաշա նոր պաշտօնէութեան մէջ վե
րրասին պիտի չմանէ :

ՅԵՆ. 26 և մարտ 40, 1879		13. 81	Բուհ. երկաթ. բաժնիք	46.
Գոնադիաձե		ԴՐԱՄԲ, Օտմ.	լիբան 400 էն	
Մէհրադիյէ	407	Բուհից: քոլ		80
Քաղաքաւ	483	Լուսնի տն		87
Պրիմի քաղաք	182	Գրքից		51
Հիւնիկոց	122	Անկալ. լիբան		109
Սանէթ	40			
Քաղաքաւ				

Ամերիկայի միտնոտրաց ընկերութեան կողմէն
կ'մուտդիր ձ. Ք. Կրին

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
Զագագճըլար, Յակոբեան խան, Թիւ 12.